ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

EU4Digital. Հետազոտական և կրթական համայնքների միացում (EaPConnect)

Իրականացման ժամանակահատված: 01.07.2020 - 30.06.2025

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 10 000 000

Ընդհանուր բյուջե: € 10 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

GÉANT Association

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/EaPConnectProject, https://twitter.com/eapconnect_news, youtube.com/user/GEANTtv,

Նախագծի կայքէջ: eapconnect.eu

Նախագծի նկարագրություն:

«EaPConnect» ծրագրի երկրորդ փուլը հիմնվում է առաջին փուլի ձեռքբերումների վրա՝ միավորելով Եվրամիության և Արևելյան գործընկերության երկրների գիտահետազոտական և կրթական համայնքներին և նվազեցնելով թվային խզվածքը:

Ծրագիրը զարգացնելու է ցանցային ենթակառուցվածքները՝ երկրների միջև գիտական փոխանակումներն ընդլայնելու, հետազոտությունների և կրթության (R&E) ոլորտում միջազգային համագործակցության բարելավմանն ուղղված նոր ծառայություններ առաջարկելու, R&E էկոհամակարգերում ազգային հետազոտական և կրթական ցանցերն (ԱՀԿՑ-ներ) ամրապնդելու, ինչպես նաև միջոցառումների, դասընթացների և այլ նախաձեռնությունների միջոցով գիտելիքների ու հմտությունների պաշարի և համագործակցային աշխատանքի միջավայրի ստեղծման համար:

Ակնկալվող արդյունքներ:

- Հետազոտությունների և կրթության համար նախատեսված բարձր թողունակությամբ ցանցային ենթակառուցվածքի ձեռք բերում և մատակարարում, ինչպես նաև համաեվրոպական GÉANT ցանցին դրա տրամաբանական ինտեգրման ապահովում.
- GÉANT-ից զատ նաև այլ ծառայությունների մատուցում, որոնք աջակցում են հետազոտական և կրթական համայնքների՝ ռեսուրսների մատչելիության և ցանցում համատեղ աշխատանքի կարիքներին.
- Դասընթացների, սեմինարների և մենթորական ծրագրերի հասանելիություն՝ գիտելիքների պաշարի և փոխհարաբերությունների ստեղծման համար, որոնք աջակցում են շահառու գործընկերների կայունությանը և ծրագրի նպատակներին հասնելու նրանց կարողությանը.
- Համաժողովների, օգտատերերի համայնքների իրազեկման և այլ գործողությունների կազմակերպում՝ տարբեր շահագրգիռ կողմերի շրջանում ծրագրի, դրա գործընկերների, ձեռքբերումների և օգուտների ճանաչելիության բարձրացնման, ինչպես նաև գիտելիքների փոխանակման և մարդկային ցանցերի ստեղծման համար: